

Սմբատայ որդւոյն Սարգսի յուշարձանին մէջ: Այս երկու յուշարձաններուն արձանադրութեանց իրարմէ բոլորովին անկախ գոյութիւնը նոյն հաստատութեան (Սանահինի) մէջ զիս կը համոզէ որ երկու եղբայրներու մասին, Գրիգորի եւ Սմբատի, է կատարուած յիշատակութիւնը:

Գրիգոր Ա-ի ծննդեան, կենաց, ամուսնութեան եւ մահուան մասին սրեւէ ծանօթութիւն չունինք: Սակայն գիտենք որ որդի մը ունեցած է Կոստանդ անունով, որ զինք կը յիշէ 1215էն (Յիշատ. թիւ 4) արձանադրութեան մէջ:

Կ Ո Ս Ս Ա Ն Դ

Որդին Գրիգոր Ա-ի: Իր հօր նման բոլորովին անձանօթ կը մնայ իր կենսագրական պարագաներով: Իրմէ մեղի հասած է 1215էն արձանադրութիւն մը (Յիշատ. 4), ուր նուիրատուութիւն կ'ընէ եւ իրեն համար պատարագել կը խնդրէ:

Ս Մ Բ Ա Տ Ա

Համազասպ Ա-ի որդին, 1191ին կը յիշուի իր չորս որդիներէն սաւաղէս. «...Ի ՈՍ (1191) թփս, ես՝ Քուրդս, Հասան, Համազասպ(ի)ս, Սարգիս, որդիք Սմբատա, որդո Համ(ա)զ(ա)սպա մարծպանի...» (Յիշատ. 1): Դարձեալ 1215ին. «...Սաշս յիշատակ Սարգսի, որդոյ Սմբատայ» (Յիշատ. 3): Իրմէ սրեւէ ծանօթութիւն կը պահսի:

Ք Ո Ի Բ Գ

Որդին է Սմբատ Ա-ի: «...Ի ՈՍ (1191) թփս, ես՝ Քուրդս, Հասան, Համազասպ(ի)ս, Սարգիս, որդիք Սմբատա, որդո Համ(ա)զ(ա)սպա մարծպանի...» (Յիշատ. 1): Գուցէ ինքն է որ կը յիշուի Հոռոմոսի ՈԶԳ (1234) թուականու Սաթուռ տիկնոջ արձանադրութեան մէջ, ուր Սաթուռ կը խնդրէ «...յամենայն ամի պատարագել զՔրիստոս աւր. ԺԵ (15). Ինձ Սաթուռիս, ԺԵ. առն իմոյ Սմբատայ. Ժ (10). աւր մաւրն Սորիշահի եւ. Ե. (5) իւր հաւրն Քրդին...» («Շիրակ», Ալիշան, էջ 24ա): Եթէ մեր այս նոյնացումը ճիշդ է, այն առն Քուրդ Համազասպեան ամուսնացած է Սորիշահի հետ եւ ունեցած է Սմբատ անուն որդի մը, որ ամուսնացած էր Սաթուռ տիկնոջ: Սմբատ մեռած էր արդէն 1234ին ըստ քիչ վերը տրուած արձանադրութեան, Հոռոմոսի վանքէն:

Ուրեմն իրը պէտք է նկատել նաեւ Սանահինի «Դրոսի գաւթի արեւմտեան պատին յենած մեծ խաչքարը», որուն ճակատին կայ «Նշան(դ)Այ յաւզնեա Քրդի, Սորիշահի եւ գաւ(ա)կաց նոցա» («Սանահինի վանքը» եւն.: Կարօ Ղաֆաղարեան, էջ 176):

Հ Ա Ս Ա Ն

Սմբատ Ա-ի որդին, որ կը յիշուի «Ի ՈՍ (1191) թփս, ես՝ Քուրդս, Հասան, Համազասպ(ի)ս, Սարգիս, որդիք Սմբատա, որդո Համ(ա)զ(ա)սպա մարծպանի...» (Յիշատ. 1): Ամուսնացած էր եւ կինը կը կոչուէր Մամիսթուռ (կամ Մամ Սաթուռ) ըստ Կարմիր Աւետարանի յիշատակարանին (թիւ 6), ուր իր որդին Մարծպան Մամիկոնեան կը խնդրէ պատարագ «...ա(1)